

Ովկիանիա :

Ինդոնեզիայի Սուրաբայի կ'ըստին բազմաթիւ և սփիւռ կղզիք մեծին կամ խաղաղական Ովկիանու , որ կը ձգուին ընդ մէջ 34 երորդ հիւսիսային զուգահեռականին և 56 երորդ հարաւային զուգահեռականին , ու սկսեալ 90 աստիճանէ արևելեան երկայնութեան կը տարածուին մինչև 107 աստիճան արևմտեան երկայնութեան , այսինքն է հողագնացային գրեթէ երրորդ մասը : (Վեպէտե Ովկիանիա այսպէս լայնածաւալ ընդարձակութիւն ունի , սակայն երկրին մակերևոյթն հազիւ Լաբովիոյ կը հաւասարի , թէ և իր մասերէն մէկը , որ է Լոր-Նոլանտա , մեծութեան իբր ցամաք համարուի : Դժարահասակը և նաւարկութեան երկու գլխաւոր մաս կը բաժնեն Ովկիանիան՝ արևմտեան և արևելեան . առաջինը Աստրալիա կամ հարաւային , որ և իր բնակչաց անուամբը կ'ըսուի նաև Մալէպու , և է բազմութիւն մեծամեծ կղզեաց , որովք ասիական ցամաքին հետ կը կապուի , իսկ երկրորդը Բուլնէպու կամ բազմակղզիք , որ է Լոր-Օելանտա և սփիւռք մանր կղզեաց դէպ 'ի արևելք :

Եւս արևելեան ծայրից կղզեացս առաջին ծանօթութիւնները Լորդուգալայ գիւտերէն և աշխարհակալութիւններէն կը սկսին . տարակոյս չկայ թէ հին ատեն արաբացի նաւորդք գունէ անորոշ տեղեկութիւն մը ունեցած ըլլան այս կողմանցս վրայ . բայց ըստ ամենայնի հաւատք չընծայուիր անոնց առասպելախառն արշաւանացը : Սակեյլանի շրջանաւարկութիւնը , և իրմէ ետքը դէպ 'ի Հնդկիս ճամբայ գտնելու համար , որիչ Լարեյուոյ գլխէն , եղած ուղևորութիւնները , ընդարձակեցին խաղաղական ծովուն արևելեան կողմանց ծանօթութիւնները . բայց հազիւ թէ ութնամեկերորդ դարուն վերջի տարիները ճանչցուեցաւ բոլորովին Ովկիանիա :

Վրեթէ ամէն այս երկիրները բնա-

կուած էին իրենց գիւտին ժամանակ , և նաւորդք գիտեցին որ մարդկային ցեղն հոն երկու գլխաւոր զանազանութեց կը վերաբերէր . դեղին՝ արևելեան և հիւսիսային կողմերը , և սև՝ արևմտեան կողմերը , հասարակածին հարաւային դին , զոր ոմանք աշխարհագրաց Աստրալիա կամ հարաւային Եսիա կ'անուանեն : (Վեպէտ և այս մասիս այլ և այլ ժողովրդոց մէջ աննմանութիւններ տեսան ճանապարհորդք , բայց դիւրին է երևակայել թէ ինչպէս մարդկութիւնն այս կողմանցս վրայ կրցեր է տարածուիլ , վասն զի անընդհատ շարք մըն են կղզեաց , մէկմէկէ միայն նեղ ջրանցքներով բաժնուած , որով կը կապուին ասիական ցամաքին հետ . իսկ աւելի դժուարին է մեկնել թէ ինչպէս արևելեան արշիպելագոսները բնակութիւն ունեցան , որոնք ցրուի սփռուած են ովկիանոսին ընդարձակութեանը մէջ , ու ամենէն մօտիններն իրարմէ 600 փարսախ հեռու են , և բնակներն ուրիշ նաւ չունին բայց եթէ ծառի բունէ անձև մակոյկներ : Եւս զարմանքն աւելի մեծ եղաւ երբ ծանօթացան Բուլնէպուի կազմող արշիպելագոսներն , որ կը ձգուին իբր 1200 փարսախ դէպ 'ի լայնութիւն և 1500 փարսախ արևելքէ արևմուտք , որոնց բնակիչներն իրարու նման են դիմօք , և աւելի կամ նուազ աղաւաղեալ լեզուի մը այլ և այլ բարբառները կը խօսին . և որ մեծն է , երբեմն մէկմէկէ ծայրագոյն հեռաւորութիւն ունեցող կղզեաց մէջ խօսուած լեզուներն աւելի նմանութիւն ունին իրարու հետ . ինչպէս , օրինակի համար , Սանտուիչ կղզեաց մէջ խօսուած լեզուները Լոր-Օելանտայի լեզուաց հետ , որոնք մէկմէկէ հեռու են 1400 փարսախ : Եւս հետևաբար այլ և այլ խնդիրներ ընդ առաջ ելան , և կը հարցնեն աշխարհագիրք թէ ուստի և ինչպէս եկեր են Ովկիանիոյ բնակիչները . ինչ զանազանութիւն ունին իւրաքանչիւր ցեղն . ինչպէս գաղթեր են արևելեան մասի ժողովուրդներն , որ իրենց բնաւորու-



Բոլիմեզիացի զինուոր.

Թեամբն ու լեզուաւը մի և նոյն ծա-
գումն ունենալ կը կարծուին . որ կէտէն
առին իրենց գաղթութիւնը :

Եւս խնդիրներս տակաւին անլուծա-
նելի մնացեր են , թէպէտ և Ուկիանիոյ
վրայ շատ բան գրուած ըլլայ մինչև հի-
մա . և դժուարին է , եթէ ոչ անհնա-
րին , իրարու բոլորովին հակառակ կար-
ծեաց մէջ ճշմարտութիւն գտնել . վասն
զի պատմական հաւաստիք չկան , և

Ուկիանիոյ անցեալն 300 տարիէն ան-
դին չանցնիր աշխարհագրաց համար ,
և քանի մը անորոշ ու տարտամ աւան-
դութիւններն ալ լոյս մը չեն կրնար
տալ : Ուրեմն մի միայն միջոց այս քըն-
նութեանցս են Էնրանաբանական նշան-
ներն , այսինքն է ինչ որ կը ցուցնեն
Ժողովրդոցս արտաքին կերպարանքը ,
անդամազննական պայմանը , և անոնց
լեզուին ու բարուց իրարու աւելի կամ

նուազ մերձաւորութիւնը : Շատերն այս վերջի նշաններս բաւական կը սեպեն , զանց առնելով առաջինները . ինչպէս Տիւրվիլ գաղղիացի երեւելի նաւարկուն , որ Ովկիանիոյ ժողովրդոց վրայ այնչափ տեղեկութիւններ տուաւ , լեզուաց բաղդատութիւնն ու բարուց նմանութիւնը անսխալ առաջնորդ կը սեպէ ժողովրդոց ծագման քննութեցը մէջ : Ուստի ինքն Ովկիանիան չորս այլ և այլ գաւառ կը բաժնէ . Բոլիւէյթա , Միգրոնէյթա , Մալէյթա և Մէլանէյթա :

Ա . Բոլիւնէզիա կը բաղկանայ բազմաթիւ արշիպելագոսներէ , որոնք ցրիւ սիւռուած են Բոլիւիկոյ արեւմտեան եզերքէն սկսեալ մինչև Եոր-Շոլանտա : Եւս ընդարձակ սահմանացս մէջ եղած կղզիներն , որոնցմէ ոմանք ծովուն երեսէն շատ բարձր են , ոմանք գրեթէ հաւասար , բնակող ժողովրդոց մորթը՝ է որ թուի է և է որ սեւագոյն . մազը սև , հաստ , ողորկ , երբեմն նաև գանգուր . աչքը սև՝ աւելի պատռուած քան բացուած , ամենեւին կորութիւն չունի . քիթը երկայն , շիտակ , երբեմն բարձրոյն . ղնգունքն ընդարձակ և բաց , որով շատ անգամ քթերնին կարճ և տափարակ կը տեսնուին , մանաւանդ կանանց և տղայոց . շրթունքը թանձր և կոր , ատամունքը շատ գեղեցիկ , այտքը քիչ մը լայն բայց ոչ ուռած : Գլխմբերնին շատ անգամ գեղեցիկ է և նշանական , կանայք նուազ բարեձև են քան զարս , որոնք սովորաբար մօրուք ունին վերին շրթանցն ու կզակին վրայ : Ոմանք հասակագեղ են , և ուժեղ . ու քանի մը կղզեաց երիտասարդները կըրնան արձանագործութեան նախագաղափար ըլլալ : Եւս ժողովրդոցս այլ և այլ բարբառներն իրարու հետ բաղդատելով , ճանչցուեր է որ մէկ մայր լեզուէ մը առաջ կու գան քիչ աղաւաղութիւն , որ պէտք է խօսուած ըլլայ անոնց ցրուելէն առաջ , թէ և այլ և այլ ծագումն ունենան : Բոլիւնէզիոյ արեւմտեան կողմերը օտար ժողովրդոց հետ ունեցած հաղորդութիւնն այլայլեր է լեզուն , բայց արեւելեան կողմերն ուր ամենեւին

հաղորդութիւն չկայ օտարաց հետ , այս այլայլութիւնս նուազ զգալի է : Բոլիւնէզիական բառագրոց շատ մը բառերը մեծ նմանութիւն ունին մալայեցի և նոյն իսկ մալայ լեզուաց համանիշ բառիցն հետ : Բարբ , սովորութիւնք և աւանդութիւնք աւելի լաւ պահուած են արեւելեան մասին մէջ . Դաբո-ի կրօնական արգելքն ընդհանուր է , և Գալա ըսուած արբեցուցիչ ըմպելիքը , որ պղպեղի արմատէն կը հանուի , առ հասարակ է :

Բ . Սիգրոնէյթա , որուն բնակիչներն են դեղնամորթ , բուստեայ մանր կղզիներէ կը բաղկանայ : Հոս լեզուաց միութիւն չկայ , և Բոլիւնէզիոյ լեզուներէն կը տարբերին , և իրարու մէջ ալ շատ կը զանազանուին : Սիգրոնէզիացիք Դաբո-ի արգելք չունին , և Գալա ամենեւին չեն գործածեր , ոմանք Բեդէլ կը ծամեն : Եւս պատճառացս համար Տիւրվիլ առանձնակի դասաւորեց զանոնք : Սակայն անոնց քաղաքականութիւնն հաւասար աստիճանի է Բոլիւնէզիացուց հետ , և նոյն տեսակ կեանք կ'անցընեն : Գլխաւոր փոքրու գործածութիւնը՝ կերակուր եփելու համար , բրբուսի արմատով մարմիննին օծեն ու կերպասները ներկելը , իրենք զիրենք կիտուածելու սովորութիւնը , մարդակերութիւնն հասարակաց է՝ գուցէ ամենուն , Դաբո-ի նման արգելք մը , և ուրիշ շատ բաներ կը մերձեցունեն այս ժողովուրդները Բոլիւնէզիացուց : Բայց կենդանաբանական նշաններն ալ աւելի նմանութիւն ունին . այս ժողովուրդներս մէկմէկէ միայն իրենց թխափոյն և դեղնորակ մորթովը կը տարբերին , և թէպէտ կարճահասակ են և տգեղ , բայց այս աննմանութեանցս պատճառն է անոնց բնակութիւնը , ապրելու կերպը , և գուցէ սև ցեղի մը խառնուրդը , որ ժամանակաւ կղզեացս մէջ բնակած ըլլայ , և այս զանազանութիւնները բաւական չեն առանձին դասաւորութիւն կազմելու զանոնք իբրև տարբեր ցեղ մը :

Գ . Մալէյթա թէպէտ և աւելի ա-



Զինուոր Սանտուշի կղզեաց .

Ուշ ծանօթացաւ Լաւրոպացւոց, և հոն
գաղթականութիւններ հաստատեցին,
սակաւն աշխարհիս այս մասին վրայ ե-
ղած տեղեկութիւնները տակաւին ան-
կատար են, և պատճառ կը համարուի
կլիմային անառողջութիւնը և բնակ-
չաց վայրագութիւնը: Հիմա հպատա-
կելով իրենց եւրոպացի տեարցը, կամ
սուլդաններու և ռաճաներու, հրնդ-
կային արշիպեղագոսի կղզեաց բնակիչ-
ներն այլ և այլ աստիճանի քաղաքակա-
նութիւն ունին, և են քրիստոնէայք,
մահմետականք, պուտտականք և կամ

յետին նիւթապաշտք: Ընդհանրապէս
հալայեցի կ'ըսուին այն ժողովուրդներն
որ առանձին ազգ կը կազմեն, և այլ և
այլ լեզուներ կը խօսին. ասոնց հասակը
միջակ է, մազը սև ու ողորկ, երբեմն
նաև գանգրաւոր, մորթը թխագոյն
քան զարևելեան Բալթիկեղիացիս, կեր-
պարանքը նուազ կանոնաւոր և նուազ
վայելուչ, աչքը շատ անգամ թեթև
խոտորնակութիւն ունի. չրթունքը ա-
ւելի թանձր և աւելի դուրս ցցուած:
Ըստ այսմաստորագրութեան մալայեցիք
շատ աւելի տգեղ են քան զԲալթիկեղիա-

ցիս . սակայն ուր որ հնդիկ , չինացի , արաբացի , և այլն , գաղթականաց ազգեցութիւնը չէ մտած , կերպարանքնին աւելի գեղեցիկ է , և կը մօտենայ Ռօլինեզիացոց : Սալայեցիք քոյր լեզուներ կը խօսին , իրենց բառագրոց բազմութիւն բառերը Ռօլինեզիացոց բարբառներուն մէջ կը գտուին , և մանաւանդ քանի մը քերականական ձևերը մէկմէկու շատ նմանութիւն ունին :

Ռայց միայն դեղնամորթները չեն Սալեզիոյ կղզեաց բնակիչները . սև վայրենի ժողովուրդներ ալ կան , որներքին կողմերը կը բնակին , և այլ և այլ անուամբ կ'ըսուին նէկոյ Կէլ Դոդէ , Բաբո , Կէֆո-բո , Էնթաթէ , և այլն : Ռստոմանց ճանապարհորդաց ասոնցմէ փոքրամասնութիւնը գեղեր ալ կը գտուին Սիգրոնեզիոյ քանի մը կղզեաց մէջ . այս յետին վայրագ սևերուն վրայ եղած քանի մը սակաւամասնութիւններն ըստուգել կը կարծեն , բայց 'ի քանի մը մանր տարբերութեանց , որ ասոնք ամէն ալ սև տեսակի մը մի և նոյն ճիւղին կը վերաբերին : Ռփրիկոյ սևերուն հետ մեծ վերաբերութիւն ունին , միայն ասոնց արտաքին նշաններն այնչափ ծայրայեղ չեն : Ռուազ թանձր շրթունք ունին , թէպէտ կարճ և տափարակ քիթ սակայն ըստ մեծի մասին շիտակ . սևերու նման ասրաւոր մազ բայց խոշոր գանգուրը : Հաւանական կը կարծուի որ 'ի սկզբանէ կողմանցս բնակիչներն աս ցեղս ըլլայ , յառաջ քան դեղնամորթից ցրուումը : Ռուցէ Ռօլինեզիոյ կղզեաց մէկ մասին մէջն ալ կը բնակէր այս ցեղը . քանի մը տեղ , ինչպէս Ռոր-Հոլանտա և Սանտուիչ կղզիները , գտնել կը կարծեն ճանապարհորդք ասոնց սև տեսակի մը հետ խառնումն հետքերը : Իսկ Ռփրիկոյ արևելեան ափանցը վրայ սևեր կան որ նմանութիւն ունին Սալեզիոյ սևերուն . Ռիոյ հարաւային ժողովուրդներն ալ նոյն ցեղէն էին , ուրեմն ովկէանեան սևերը շղթայ մը կը կազմէին , որ Ռուզամպիքէն սկսեալ ինչուան Ռվկիանիա կը ձգուի : Ռմենէին նման ափրիկեցոց ,

Ռվկիանիոյ սևերն ալ մորթներին կը կիտուածեն ցետելով՝ փոխանակ ծակելու , վերին ծամելեաց երկու առաջակողմեան ակունքերը կը հանեն , և բազմութիւն այլ և այլ լեզուներ կը խօսին :

Դ . Ռէլանիէ , որուն մասերն են Ռոր-Հոլանտա , Ռասմանիա կամ Սան-Տիեմենի երկիրը , Ռոր-Ռալետոնիա , Ռոր-Հեբրիտք , Ռիդի կղզիք , Ռոր-Ռիտանիա , Ռոր-Ռուինէա և գլխաւոր արշիպելագոսներուն վերաբերեալ կը զննեն , և ասոնց ամենուն միայն ծովեզերքները քիչ մը քննուած են , ու կը կարծուին թէ լոկ սևերէ բնակուած ըլլան : Ռյս սևերը երկու ցեղ կը բաժնուին մէկմէկէ տարբեր . Ռէլանիէ ցեղ , որուն վրայ վերը խօսեցանք , այլ և այլ արշիպելագոսներն ու Սան-Տիեմենի երկիրը կը բնակի . և Կապալիան ցեղ , որ Ռոր-Հոլանտա կը բնակի : Ռերջին ցեղին անհատից երկայն ստորագրութիւններ կ'ընեն ճանապարհորդք . ասոնց փորը մեծ է , կ'ըսեն , և գմբէթաւոր , ընդհակառակն անդամները բարակ ու երկայն , կերպարանքը՝ զազիր և գնացքն անասնական : Ռիչ մը չափազանց կ'երևայ ասոնց իմացականութեան վրայ տրուած տեղեկութիւններն իբր թէ բոլորովին ապուշ ըլլան : Ռր պատմեն թէ քանի մը տեղացի տղայք Ռիտէյ , որ Ռոր-Հոլանտայի գլխաւոր քաղաքն է , դպրոցաց մէջ կը թուելով կարդալ , գրել , հաշիւ և ուրուագրութիւն սորվեցան , հաւասար նոյնահասակ սպիտակամորթ տղայոց : Ռեզուին գրեթէ բոլորովին կը տարբերի մէկ մէկէ քիչ հեռաւորութեամբ անգամեղած տեղեաց մէջ : Ռյս թըշուառ ցեղս հետզհետէ ջնջուելու վրայ է , և հիմա կը կարծուի թէ բոլոր Ռուտրալիոյ ցամաքին մէջ հազիւ 3,000 հոգի գտուին :

Սան-Տիեմենի երկրին բնակիչներն հիմա պէտք է բոլորովին ջնջուած ըլլան , վասն զի քսան տարի առաջ հազիւ թէ քառասուն հոգի կը համրուէին , և գրեթէ ամէնքն ալ էրիկ մարդ :

Ռէլանիացիք , որ բոլոր կղզիներուն

մէջ ցրուած են , և Բաբու անուամբ կը կոչուին , գեղեցիկ են և լաւագոյն քան զսէւերն Վիրիկոյ , անոնցմէ շատը վար չեն մնար Վոլինէզիացւոցմէ՝ ճարտարութեան կողմանէ , մանաւանդ երբեմն կ'անցնին զանոնք : Սեծաւ մասամբ աւելնքն ալ ճարտար նաւարկու են , և Վոր-Վուինէոյ մէջ ասոնց խառնուրդն զգալի է Սալայեցւոց հետ , որ կու գան հոն Գրիֆան որսալու : Վոր-Վալետոնիոյ և Վիգի կղզեաց մէջ բոլինէ-

զիացւոց խառնուրդն զգալի է : Սէլանուհիք ըստ մեծի մասին ձառադէմ են , և նախանձոտ արանց խստութեան տակ ճնշուած : Սէլանէզիոյ լեզուներն իրարմէ շատ կը տարբերին , այնպէս որ Սամբորոյ ըսուած պզտի կղզին , որ Վաբէրուզ գաղղիացւոյն նաւաբեկութեան տխուր յիշատակաւն անուանի է , երեք լեզու կը խօսուին իրարմէ բոլորովին տարբեր :



Աստորալիացի .



Նոր Զերանուացի .

Մետաղէ գրիչք :

Ուայզ անգղիացին 1803^ն հնարեց առաջին պողպատէ գրիչը : Բայց գործածութիւնն 1820^ն ու 1830^ն միջոցը ծաւալեցաւ , իսկ հիմա այս արուեստը շատ զարգացած է : 1851^ն ընդհանուր արուեստից հանդիսարանին հետեւութիւնը , մետաղէ գրչաց գործածութիւնը միայն Վաղղիոյ մէջ հաշուեց 1,200,000-1,300,000 տրցակ որ է 200,000,000 հատ :

Պիրմինկէմի մէջ մետաղէ գրչաց չորս առաջին կարգի գործարաններ կան , հինգ կամ վեց երկրորդական կարգի , որ տարին հազար միլիոն գրիչ կը հասցընեն , զոր վաճառականութիւնը կը տարածէ ուր որ գիր գրելու սովորութիւն կայ :

Շատ հետաքրքրական բան է մեծ գործարանի մը մէջ տեսնելն այն անհոն ու զանազան ձևերը՝ զոր կ'առնու պողպատի կտորը որ սագի փետուրին տեղը բռնեց :

Սարգ գործարանը մտած ատեն նախ